

2014-2015թթ.

**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԽՆԴԻՐԸ**

**«Linda's Fashion Stores and Brand Management» Ltd.-ին**

**ընդդեմ**

**«Լինդաս Ֆաշիոն» ՍՊԸ-ի**

Բրիտանական «Linda's Fashion Stores and Brand Management» Ltd.-ին (Լինդաս Ֆեշն Սթորզ ընդ Բրենդ Մենեջմենթ ՍՊԸ-ն) (այսուհետ՝ «Հայցվոր») և Հայաստանում գրանցված «Լինդաս Ֆաշիոն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ «Պատասխանող») (երկուսը միասին՝ «Կողմեր») կնքել են արբիտրաժային գրավոր համաձայնություն՝ իրենց միջև առկա սույն վեճը արբիտրաժային տրիբունալի լուծմանը հանձնելու վերաբերյալ: Կողմերի համաձայնությամբ ձևավորվել է երեք արբիտրներից կազմված արբիտրաժային տրիբունալ, որոնք սույն գործը լսելու են Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում:

*Կողմերը նաև համատեղ լիազորել են արբիտրաժային տրիբունալին սույն վեճը լուծել արդարության ընդհանուր սկզբունքների հիման վրա (ex aequo et bono)՝ կիրառելով տվյալ ոլորտը կարգավորող ինչպես ՀՀ օրենսդրությունը, այնպես էլ՝ միջազգային կոնվենցիաները, համաձայնագրերը, պայմանագրերը և դրանցից բխող և (կամ) դրանց չհակասող միջազգային առաջատար փորձը (տվյալ բնագավառում զարգացած իրավական համակարգ և հարուստ դատական փորձ ունեցող պետությունների ներպետական օրենսդրությունը և դատական փորձը):*

Կողմերը համաձայնել են չվիճարկել այն հարցը, թե արդյո՞ք սույն վեճը կամ դրա որևէ մի մաս ենթակա է սույն արբիտրաժի կամ ազգային (ներպետական) որևէ դատարանի քննությանը և իրենց համատեղ գրավոր համաձայնությամբ, արբիտրաժային տրիբունալին ներկայացրել են սույն գործին առնչվող ներքոգրյալ անվիճարկելի փաստերը:

1

## Փ Ա Ս Տ Ե Ր

2           Հայցվոր «Linda's Fashion Stores and Brand Management» (Լինդաս Ֆեշն Սթորզ ընդ  
3 Բրենդ Մենեջմենթ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը  
4 միջազգայնորեն հայտնի կանացի հագուստ արտադրող Բրիտանական ընկերություն է,  
5 որն աշխարհի ավելի քան 150 (հարյուր հիսուն) երկրներում ունի իր խանութների  
6 ցանցը, որոնց միջոցով իրացնում է իր ապրանքները: Հայցվորի ամենահայտնի  
7 ապրանքային նշանն իր ֆիրմային անվանման առաջին երկու բառերը պարունակող  
8 «Linda's Fashion» արտահայտությունն է: «LINDA'S FASHION» բառային ապրանքային  
9 նշանը գրանցված է աշխարհի ավելի քան 140 (հարյուր քառասուն) երկրներում:  
10 Հայաստանում այն գրանցվել է 2008թ.-ին:

11           Պատասխանող «Լինդաս Ֆաշիոն» սահմանափակ պատասխանատվությամբ  
12 ընկերությունը Հայաստանում գրանցված ընկերություն է, որի վերոգրյալ ֆիրմային  
13 անվանումը Հայաստանում գրանցվել է 2005թ.-ին: Սկսած 2008թ.-ից Պատասխանողը  
14 Հայաստան ներկրում և ՀՀ, ք, Երևան, Աբովյան 135 հասցեում գտնվող իր խանութում  
15 վաճառում է Հայցվորի «LINDA'S FASHION» ապրանքային նշանը կրող ապրանքներ:  
16 Խանութի մուտքի վերևի հատվածում 45 (քառասունհինգ) սանտիմետր բարձրություն և 5  
17 (հինգ) սանտիմետր լայնություն ունեցող վարդագույն տառերով փակցված է «LINDA'S  
18 FASHION» և հայերեն «ԼԻՆԴԱՍ ՖԵՇՆ» արտահայտությունը, որը Պատասխանողի  
19 պնդմամբ հանդիսանում է իր ֆիրմային անվանումը:

20           2008թ.-ին, տեղեկանալով Պատասխանողի, վերջինիս խանութի և ֆիրմային  
21 անվանման մասին, Հայցվորը հայց ներկայացրեց ՀՀ Տնտեսական դատարան՝  
22 պահանջելով անվավեր ճանաչել Պատասխանողի հայերեն «Լինդաս Ֆաշիոն» ՍՊԸ և  
23 անգլերեն «LINDA'S FASHION» ՍՊԸ ֆիրմային անվանման գրանցումը, ինչպես նաև  
24 արգելել «LINDA'S FASHION» և հայերեն «ԼԻՆԴԱՍ ՖԵՇՆ» անունների օգտագործումն իր  
25 խանութի մուտքի վերևի հատվածում: ՀՀ Տնտեսական դատարանը մերժեց Հայցվորի  
26 հայցը՝ նշելով, որ Պատասխանողի խանութի մուտքի վերևի հատվածում առկա  
27 գրությունը հանդիսանում է Պատասխանողի ֆիրմային անվանումը, իսկ Հայցվորի  
28 ապրանքային նշանի նկատմամբ իրավունքները չեն խախտվում, քանզի վերջինիս

29 ապրանքային նշանը գրանցվել է ավելի ուշ, քան Պատասխանողի ֆիրմային  
30 անվանումը: Նույն թվականին Հայցվորը բողոքարկեց Տնտեսական դատարանի վճիռը,  
31 սակայն ՀՀ Վերաքննիչ դատարանը չբավարարեց Հայցվորի բողոքը: Չնայած վճիռը մտել  
32 է օրինական ուժի մեջ, Հայցվորը մինչ օրս գտնում է, որ ինչպես Տնտեսական  
33 դատարանը, այնպես էլ Վերաքննիչ դատարանը սխալ և անհիմն վճիռներ են կայացրել:  
34 Հայցվորը մինչ օրս պնդում է, որ Պատասխանողն օգտագործում է ոչ թե իր ֆիրմային  
35 անվանումը, այլ Հայցվորի ապրանքային նշանը:

36 Հայցվորի պաշտոնական կայքէջի ռադիոյով հնչում են արտասահմանյան տարբեր  
37 երաժշտական ստեղծագործություններ, որոնց նկատմամբ բոլոր հեղինակային  
38 (գույքային) իրավունքները պատկանում են Հայցվորին: Կայքէջ այցելող յուրաքանչյուր  
39 անձ, կայքում առկա ապրանքներն ուսումնասիրելիս կամ գնումներ կատարելիս  
40 հնարավորություն ունի լսել այդ երաժշտական ստեղծագործությունները: Հայցվորի`  
41 ամբողջ աշխարհում ունեցած բոլոր խանութների ներքին հարդարանքը, կահույքը,  
42 դրանց գույները, սպասարկող անձնակազմի հագուստը և սպասարկման որակն ու  
43 եղանակը նույնական են: Ամբողջ աշխարհի իր սպառողների համար այդ նույնական  
44 միջավայրն ամբողջացնելու նպատակով Հայցվորն իր բոլոր խանութներում նաև  
45 հնչեցնում է իր պաշտոնական կայքէջում առկա նույն երաժշտական  
46 ստեղծագործությունները: Սովորաբար որևէ երկրում գործող Հայցվորի խանութի  
47 աշխատակից այցելում է վերջինիս պաշտոնական կայքէջ, միացնում է ռադիոն և այդ  
48 խանութում տեղադրված բազմաթիվ բարձրախոսների միջոցով հասանելի դարձնում  
49 այդ երաժշտական ստեղծագործությունները խանութի ողջ տարածքում` բոլոր  
50 այցելուներին:

51 Մի շարք անձանց վկայությամբ Պատասխանողն իր Երևանյան խանութում ևս  
52 հնչեցնում է Հայցվորի պաշտոնական կայքէջում առկա երաժշտական  
53 ստեղծագործությունները: 2014թ.-ի հուլիսի 23-ին, Հայցվորի ներկայացուցիչը, այցելելով  
54 Պատասխանողի խանութ, հաստատում է այդ փաստը:

55 2014թ.-ի օգոստոսի 1-ին Հայցվորը գրավոր եղանակով Պատասխանողին  
56 տեղեկացնում է, որ վերջինս խախտում է Հայցվորի հեղինակային իրավունքները, որը

57 վերացնելու համար անհրաժեշտ է կամ դադարեցնել իր երաժշտական  
58 ստեղծագործությունների հրապարակումը կամ կնքել լիցենզային պայմանագիր և  
59 վճարել հոնորար (ռոյալթի) Հայցվորի երաժշտական ստեղծագործություններն  
60 օգտագործելու թույլտվություն ստանալու համար:

61 2014թ.-ի օգոստոսի 10-ին, Պատասխանողը հայտնում է, որ նա որևէ հեղինակային  
62 իրավունք չի խախտում, քանզի իր խանութում ուղղակի միացնում է բոլորին հասանելի  
63 տարբեր կայքէջերի ռադիոներ: Պատասխանողը նաև նշում է, որ Հայցվորը չի  
64 ներկայացրել որևէ կոնկրետ հեղինակի անուն, որի իրավունքները խախտվում են և  
65 եզրակացնում, որ Հայցվորի պահանջն անհիմն է և վերացական:

66 2014թ.-ի օգոստոսի 15-ին Հայցվորի ներկայացուցիչը կրկին նամակ է ուղարկում  
67 Պատասխանողին՝ տեղեկացնելով, որ Պատասխանողը ոչ միայն խախտում է Հայցվորի,  
68 այլև բազմաթիվ այլ հեղինակների իրավունքներ, եթե չունի գրավոր թույլտվություն  
69 Հայաստանում գործող «Հայհեղինակ» հասարակական կազմակերպությունից  
70 ([www.armauthor.am](http://www.armauthor.am)) կամ այն հեղինակներից (իրավատերերից), որոնց  
71 ստեղծագործությունները հնչում են իր խանութի տարածքում: Ի պատասխան Հայցվորի  
72 նամակին, Պատասխանողը հայտնում է, որ նա նման որևէ թույլտվության կարիք չունի,  
73 քանզի ռադիոյով հնչող երգերը խանութում միացնելու համար որևէ թույլտվություն  
74 հարկավոր չէ: Պատասխանողը նաև հավելում է, որ ի թիվս այլ ռադիոների, իր  
75 խանութում հնչում են նաև Հայկական գրեթե բոլոր ռադիոների եթերներով հնչող  
76 երգերը, և մինչ օրս որևէ ռադիոկայան որևէ բողոք չի ներկայացրել:

77 2014թ.-ի օգոստոսի 25-ին Պատասխանողն իր Երևանյան խանութում տեղադրեց  
78 Հայցվորի խանութներում օգտագործվող և դրանց ինչպես արտաքին տեսքին, այնպես էլ  
79 ներքին տեխնիկական բոլոր հատկանիշներին նույնական յուրահատուկ սարք, որի  
80 միջոցով վաճառվում են «LINDA'S FASHION» ապրանքային նշանը կրող տարբեր  
81 տեսակի փոքր և ոչ թանկարժեք հուշանվերներ: Սարքի վերևի աջ հատվածում դաջված է  
82 «ԼԻՆԴԱՍ ՖԵՇՆ» արտահայտությունը: Սպառողներն այդ հուշանվերները գնում են  
83 իրենց դրամը մուտք անելով տվյալ սարքի մեջ և տվյալ հուշանվերի թիվը սարքի  
84 ստեղծաշարի վրա հավաքելու միջոցով: Գումարը մուտք անելուց և տվյալ հուշանվերի

85 թիվը ստեղծաշարով մուտքագրելուց հետո սարքի ներքևի պատուհանից դուրս է գալիս  
86 ընտրված հուշանվերը: Նշված սարքն արտոնագրված է Հայցվորի կողմից աշխարհի  
87 ավելի քան 150 (հարյուր հիսուն) երկրներում: 2014թ.-ի օգոստոսի 29-ին սարքն  
88 արտոնագրվեց նաև Հայաստանում:

89 2014թ.-ի սեպտեմբերի 1-ին Հայցվորը նամակ է ներկայացնում Պատասխանողին՝  
90 պահանջելով իր տարածքից հանել և այլևս չօգտագործել Հայցվորի արտոնագրով  
91 պաշտպանվող սարքը: Պատասխանողը հրաժարվում է հետևել Հայցվորի պահանջին՝  
92 նշելով, որ իր խանութում առկա սարքը, Պատասխանողի պատվերով Հայաստանում  
93 պատրաստվել է մինչև Հայցվորի կողմից 2013թ.-ին գյուտի գրանցման հայտ  
94 ներկայացնելը:

95 2014թ.-ի սեպտեմբերի 5-ին Հայցվորը հայց է ներկայացնում ՀՀ Կենտրոն և Նորք-  
96 Մարաշ ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Պատասխանողի՝ պնդելով, որ  
97 Պատասխանողն անբարեխղճորեն մրցակցում է Հայցվորի հետ և մոլորեցնում  
98 Հայաստանի սպառողներին: Հայցվորի պահանջներից մեկն իր ապրանքային նշանի  
99 օգտագործման դադարեցումն է:

100 2014թ.-ի սեպտեմբերի 8-ին Հայցվորը գրավոր նամակ ուղարկեց  
101 Պատասխանողին՝ նշելով, որ իր համբերությունը սպառվել է, և այսուհետ օգտվելով ՀՀ  
102 քաղաքացիական օրենսգրքով իրեն վերապահված իրավունքներից՝ կձեռնարկի  
103 համապատասխան միջոցներ Հայաստանում Պատասխանողի կողմից իր ապրանքի  
104 վաճառքն արգելելու ուղղությամբ:

105 Չնայած կողմերի միջև առկա լուրջ լարվածությանը, 2014թ.-ի սեպտեմբերի 12-ին  
106 կողմերը եկան համաձայնության դիմել սույն արբիտրաժ՝ իրենց միջև առաջացած սույն  
107 վեճը լուծելու նպատակով:

## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ՀԱՅՑՎՈՐԸ**, արբիտրաժային տրիբունալին խնդրում է վճռել, որ.

1. Պատասխանողի կողմից իր խանութի մուտքի վերևի հատվածում փակցված գրությունը նույնական է Հայցվորի ապրանքային նշանի հետ և խախտում է Հայցվորի ապրանքային նշանը,
2. Պատասխանողը խախտում է Հայցվորի հեղինակային իրավունքները և պարտավոր է դադարեցնել իր խանութում հնչող որևէ երաժշտական ստեղծագործության օգտագործումը, եթե չունի համապատասխան գրավոր թույլտվություն հեղինակներից կամ իրավատերերից,
3. Պատասխանողը խախտում է Հայցվորի գյուտի նկատմամբ իրավունքները,
4. Պատասխանողն անբարեխղճորեն մրցակցում է Հայցվորի հետ:

**ՊԱՏԱՍԽԱՆՈՂԸ**, արբիտրաժային տրիբունալին խնդրում է վճռել, որ.

1. Պատասխանողի խանութի մուտքի վերևի հատվածում փակցված գրությունը հանդիսանում է Պատասխանողի ֆիրմային անվանումը և չի խախտում Հայցվորի ապրանքային նշանը,
2. Պատասխանողը չի խախտում Հայցվորի հեղինակային իրավունքները և Հայցվորն իրավունք չունի Պատասխանողից պահանջել դադարեցնել իր խանութում հնչող բոլոր երաժշտական ստեղծագործությունների օգտագործումը,
3. Պատասխանողը չի խախտում Հայցվորի գյուտի նկատմամբ իրավունքները,
4. Պատասխանողն անբարեխղճորեն չի մրցակցում Հայցվորի հետ:

**Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝**

***ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԽԱՂ ՄՐՅՈՒՅԹԻ ՎԵՐՈՉՐՅԱԼ ԽՆԴՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՓԱՍՏԵՐԸ ՀՈՐԻՆՎԱԾ ԵՆ:***